

առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից Համալսարանի տարածքում անհրաժեշտության դեպքում ունի առաջին բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

2) Համալսարանի տարածքում յուրաքանչյուր ոք իրավունք ունի ստանալու առաջին բժշկական օգնություն և սպասարկում անվճար:

11. Բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք Համալսարանում իրավունք ունի՝

1) ընտրել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողին.

2) ստանալ առաջին բժշկական օգնություն և սպասարկում՝ հիգիենայի պահանջներին համապատասխանող պայմաններում .

3) պահանջել բժկի օգնությանը դիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից.

4) արժանանալ հարգալից վերաբերմունքի՝ Համալսարանի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից:

12. Համալսարանի յուրաքանչյուր աշխատակից և ուսանող իրավունք ունի ստանալու անվճար առաջին բժշկական օգնություն և սպասարկում:

13. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են՝

ա) յուրաքանչյուր անձի ցուցաբերել անհետաձգելի առաջին բժշկական օգնություն.

բ) ապահովել ցուցաբերվող բժշկական օգնության և սպասարկման քանակական ու որակական բնութագրիչների համապատասխանությունը սահմանված չափանիշներին.

գ) յուրաքանչյուրին տեղյակ պահել նրան տրամադրվելիք բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի, մեթոդների, ծավալների, տրամադրման կարգի և պայմանների մասին.

դ) պահպանել հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիությունը, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից.

ե) ներկայացնել վիճակագրական և այլ տեղեկություններ Համալսարանում բուժօգնություն կամ բուժօգնություն ստացած անձանց վերաբերյալ.

զ) հոգատար և հարգալից վերաբերմունք ցուցաբերել հիվանդների կամ դիմողների նկատմամբ:

III. ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

14. Համալսարանի բուժկետը կարող է իրականացնել միջոցառումներ առանձին հիվանդությունների ուղղությամբ կամ համաճարակների կանխարգելման միջոցառումներ պետական այլ առողջապահական մարմինների կամ կազմակերպությունների հետ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

15. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելիս թույլատրվում է դեղերի, մեթոդների, ձևերի, միջոցների կիրառում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

16. Անհրաժեշտության դեպքում Համալսարանի բուժկետը հիվանդի կամ բուժկետ դիմողի առողջական վիճակի բարելավման հետագա գործողությունների ապահովման նպատակով դիմում է պետական առողջապահական հիմնարկների օգնությանը: